

**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
(IN-HOME SUPPORTIVE SERVICES, IHSS) ԾՐԱԳԻՐ  
ՄՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ**

**ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.**

- Օգտագործեք սև կամ կապույտ թանաք: Հստակ տպեք տեղեկությունները:
- Դուք (կամ ձեր լիազորված ներկայացուցիչը) պետք է լրացնեք այս ձևի ՄԱՍ A-ն, որպեսզի վարչաշրջանին տեղեկացնեք, թե ում եք ընտրել ձեզ հաստատված ծառայությունները տրամադրելու համար:
- Եթե դուք մի քանի մատակարարողներ ունեք, դուք պետք է լրացնեք առանձին ձև յուրաքանչյուր մարդու համար, ով ձեզ հաստատված ծառայություն է տրամադրելու:
- Դուք պետք է ստորագրեք փաստերի ճամաչման հատվածն այս ձևի ՄԱՍ C-ում:
- Խնդրում ենք վերադարձնել այս լրացված և ստորագրված ձևը վարչաշրջանին: Վարչաշրջանը կպահպանի բնօրինակը, իսկ ձեզ կուղարկի պատճենը:

<b>ՄԱՍ A. ՄՏԱՑՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ</b>	
1. Ստացողի անունը՝	
2. Վարչաշրջանի IHSS գործի համարը՝	
3. Մատակարարողի անունը՝	
4. Մատակարարողի հասցեն՝ Քաղաքը, նահանգը, փոստային կոդը՝	
5. Մատակարարողի հեռախոսահամարը՝	
6. Մատակարարողի ծննդյան ամսաթիվը՝	
7. Մատակարարողի սոցիալական ապահովության #*՝	
8. Մատակարարողի սեռը (նշեք վանդակը)՝	<input type="checkbox"/> Արական <input type="checkbox"/> Իգական
9. Մատակարարողի հարաբերությունը ստացողի հետ (եթե առկա է)՝	<input type="checkbox"/> Ծնող <input type="checkbox"/> Երեխա <input type="checkbox"/> Ամուսին/Զուգընկեր <input type="checkbox"/> Պահապան <input type="checkbox"/> Խնամակալ <input type="checkbox"/> Այլ _____
10. Մատակարարողի աշխատանքը սկսելու ամսաթիվը՝	

\*ԱԿՆԱՐԿ. սոցիալական ապահովության համարների հավաքումը պահանջվում է 1986 թ. Ներգաղթի բարեփոխումների և վերահսկման ակտով, Հանրային օրենք 99-603 (8 USC 1324a) հաստատելու համար անձի ինքնությունը և Միացյալ Նահանգներում աշխատելու իրավասությունը:

Ես ընտրում եմ վերոնշյալ անձին որպես իմ IHSS մատակարարող: Այս անձը տրամադրելու է որոշ կամ բոլոր ծառայությունները, որոնք հաստատված են վարչաշրջանի կողմից:

## ՄԱՍ B. ՍՏԱՑՈՂԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

### ԵՍ ՀԱՄԿԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ ՈՐ.

- Այն անձը, ում ես ընտրել եմ որպես իմ մատակարարող, չի կարող ստանալ դաշնային և/կամ նահանգային գումար ինձ ծառայություններ տրամադրելու համար, մինչև որ նա չբավարարի մատակարարողի բոլոր նշված պահանջները: Այս պահանջները ներառում են Մատակարարողի անդամագրման ձևը (SOC 426) լրացնելը, ստորագրելը և վերադարձնելը (անձամբ), մատնահետքեր հանձնելը և քրեական անցյալի պատմության ստուգում անցնելը, մատակարարողի կողմնորոշում անցնելը, և ստորագրած Մատակարարողի անդամագրման պայմանագիր (SOC 846) վերադարձնելը:
- Ես կստանամ ծանուցում վարչաշրջանից՝ տեղեկացնելով ինձ, եթե այն անձը, որին ես ընտրել եմ որպես իմ մատակարարող, չի համապատասխանում ներկայացված պահանջներին կամ որ նա իրավասու չէ լինելու IHSS մատակարարող:
- Եթե այնուամենայնիվ ես օգտվում եմ այդ անձի ծառայություններից, մինչև նա կգրանցվի որպես IHSS մատակարարող, և վարչաշրջանն ինձ ծանուցում է ուղարկում՝ տեղեկացնելով, որ այդ անձն իրավասու չէ լինել IHSS մատակարարող, ես ստիպված կլինեմ ինքս վճարել նրան այն ծառայությունների համար, որոնք նա տրամադրել է մինչև իրեն ոչ-իրավասու ճանաչելը, և բոլոր այն ծառայությունների համար, որոնք նա կտրամադրի վարչաշրջանի ծանուցումից հետո:
- Ոչ վարչաշրջանը, ոչ էլ նահանգը պատասխանատվություն չեն կրի ցանկացած բողոքների և/կամ կորուստների համար, որոնք կպատճառի ինձ այն անձը, որին ես կնախընտրեմ վարձել որպես իմ IHSS մատակարարող: Ես համաձայն եմ չներգրավել նահանգը և վարչաշրջանը, նրանց գրասենյակները, գործակալներին և աշխատողներին և իմ վրա վերցնել պատասխանատվությունը ցանկացած անձին պատճառած վնասի և/կամ կորուստների համար այն անձի կողմից, ում ես կվարձեմ որպես իմ IHSS մատակարարող:
- Վարչաշրջանը կարող է տեղեկություն տրամադրել իմ հաստատված ծառայությունների և դրանց ժամերի մասին այն անձին, որին ես կընտրեմ որպես իմ ծառայությունների մատակարարող: Վարչաշրջանը կողարկի իմ մատակարարողին IHSS Մատակարարողի ծանուցում ստացողի հաստատված ժամերի և ծառայությունների վերաբերյալ (SOC 2271):
- Իմ ընդհանուր ամսական հաստատված ժամերը բաժանվելու են 4-ի՝ որոշելու համար իմ առավելագույն շաբաթական ժամերը: Առավելագույն շաբաթական ժամերը մի ուղեցույց է, որը ինձ տեղեկացնում է ժամերի առավելագույն քանակի մասին, որը իմ մատակարարող(ներ)ը կարող է աշխատել ինձ համար աշխատանքային շաբաթվա ընթացքում: Սակայն, քանի որ ամիսների մեծ մասը 4 շաբաթից մի քիչ ավել է, ես պետք է համագործակցեմ իմ մատակարարող(ներ)ի հետ, որպեսզի բաշխեք նրա ժամերն ամբողջ ամսվա ընթացքում՝ համոզվելու համար, որ ես ծառայության բոլոր անհրաժեշտ ժամերն ունեմ ամսվա համար:
- Երբեմն ինձ կարող է անհրաժեշտ լինել, որ իմ մատակարարողն աշխատի իմ առավելագույն շաբաթական ժամերից ավել: Ես պետք է վարչաշրջանից հավանություն խնդրեմ իմ առավելագույն շաբաթական ժամերի փոփոխության համար, միայն եթե փոփոխության պատճառով իմ մատակարարողն աշխատելու է.

1. Ավել արտաժամյա ժամեր մեկ ամսում, քան նա սովորաբար աշխատում է.

2. Ինձ համար ավելի քան 40 ժամ աշխատանքային շաբաթում, եթե իմ առավելագույն շաբաթական ժամերը կազմում են 40 ժամ կամ պակաս աշխատանքային շաբաթում:

- Եթե ես հաստատված բացառություն չստանամ, իմ մատակարարողը խախտում կունենա իմ առավելագույն շաբաթական ժամերից ավել աշխատելու համար:
- Ես **էրբեք** չեմ կարող թույլատրել իմ մատակարարողին աշխատել իմ ընդհանուր ամսական հաստատված ծառայություն ժամերից ավել: Հետևաբար, երբ ես թույլ եմ տալիս իմ մատակարարողին աշխատել լրացուցիչ ժամեր մեկ շաբաթում, ես պետք է ասեմ մատակարարողին, որ նա պակաս ժամեր աշխատի ամսվա մյուս շաբաթվա(ների) ընթացքում:
- Եթե իմ մատակարարողն աշխատում է մեկ այլ ստացողի համար, ապա աշխատանքային շաբաթում նրա հայցված առավելագույն ժամաքանակը միասնաբար բոլոր ստացողների համար նրա աշխատած ժամանակի համար պետք է կազմի **66 ժամ**: Ես պետք է իմ մատակարարողի համար ժամանակացույց կազմեմ՝ որոշելու համար, թե քանի ժամ է նա աշխատելու ինձ համար ամեն շաբաթ, որպեսզի համոզվեմ, որ նա չի աշխատում շաբաթական 66 ժամից ավել: Ես կստանամ Ծանուցում ստացողին առավելագույն շաբաթական ժամերի վերաբերյալ (SOC 2271A), որը տեղեկություններ կպարունակի իմ առավելագույն շաբաթական ժամերի մասին, որպեսզի ես օգտվեմ դրանից իմ մատակարարող(ներ)ի համար աշխատանքային գրաֆիկ ստեղծելիս: Աշխատանքային գրաֆիկը կազմելու համար իմ մատակարարողը պետք է ինձ ասի, թե նա որքան ժամ է կարող աշխատել ինձ համար յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա ընթացքում: Եթե իմ մատակարարողը չի կարող աշխատել իմ բոլոր հաստատված ժամերը, ապա ես պետք է լրացուցիչ մատակարարող(ներ) գտնեմ: **Եթե ես օգնության կարիք ունեմ մեկ այլ մատակարարող(ներ) գտնելու ու աշխատանքի ընդունելու հարցում, ես կարող եմ զանգահարել իմ վարչաշրջանի IHSS Հանրային իշխանություն՝ մատակարարողների տեղեկատվություն ստանալու համար, կամ իմ վարչաշրջանի IHSS գրասենյակ:**
- Վարչաշրջանն ինձ ծանուցում կուղարկի ամեն անգամ, երբ իմ մատակարարողը խախտում է ունենում: Եթե իմ մատակարարողն ունենա երեք խախտում, նա երեք ամսով կզրկվի IHSS տրամադրելու իրավունքից: Եթե երեք ամսվա հեռացումից վերադառնալուց հետո նա կրկին խախտում ստանա, ապա նա մեկ տարով կհեռացվի մատակարարողի աշխատանքից:

**ՄԱՍ Ը. ՓԱՍՏԵՐԻ ՃԱՆԱԶՈՒՄ ՍՏԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ**

Ես հասկանում եմ և համաձայն եմ հետևել այս ձևում թվարկված բոլոր պահանջներին:

ՍՏԱՅՈՂԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԱՄՍԱԹԻՎ
------------------------	---------

ԱՆՈՒՆԸ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ՝

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԱՄՍԱԹԻՎ
--	---------

ԱՆՈՒՆԸ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ՝

**ՄԻԱՅՆ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ (FOR COUNTY USE ONLY)**

WORKER NAME:	DATE:
--------------	-------